№ 64 ՇԱԲԱԹ, 23 ՄԱՐՏԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 23 ՄԱՐՏԻ № 64

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի։
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53։

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամենի ձեռով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊՐԻԼԻ 1-Ի՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. հուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂԵՎՆԵՆ ԱՆՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Գրվում են ամենայն անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 բուբլին, օրինաւոր կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը» և 2) «Մշակի» քառասնամեակ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

ՇՈՒՇԻ—ԵՎԼԱԽ ՊՕՍՏԱՅԻՆ ՏՐԱԿՏԸ

Նորից անցաւ Լ. ՎԱՐԱԶԵԱՆԻ կարգադրութեան տակը։ Ձեռք են առնված խիստ միջոցներ՝ կատարել երթեւեկութիւնը առանց ուշացնելու կայարաններում։ Ծառայողների կազմը նորոգված է քաղաքավարի և կարգապահ մարդկանցով։ Պուրատատած են կայարաններում հանգստանալու և ճաշելու համար մաքուր և յարմար սենեակներ, իսկ Ելաթ, Աղդամ, Խօջալու կայարաններում գիշերել ցանկացողների համար պատրաստված են ձրի և կահաւորված տաք սենեակներ։

Փակ կառքերի, ամեն տեսակ բաց կօլեսկաների և դիլիժանների համար, նաև առանձին տեղերի համար դիլիժանսներում, պատուէրները ընդունվում են նամականեով և հեռագիրներով օր առաջ և պատրաստ տրվում են կառքերը գնացքները վեկզալ հասած բոպէին։ Առանձին տեղի գինը մի մարդու համար դիլիժանսում, առ ոչիմ, Շուշում 3 ր., Ելաթում 4 ր։ Հասցէն՝ Евлахъ, Контора почтовой станціи.

(օ. մ.) առ. 179. 15—8

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ *ՈՒՐԲԱԹ, ապրիլի 5-ին կը կայանայ*

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԵԿՈՅ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ

անուան, որի արդիւնքը յատկացված է նրա մահարձանին։

Մասնակցում են՝ պ. պ. Ե. Թումանեան, Մելիքեան, այուղ Հապրին իր խմբով և աշակերտներով, սազանդարներ Գրիգոր, Սեւի և ուրիշներ։

✦ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԶԳԵՍՏՆԵՐՈՎ ✦

Բեմը կը զարդարէ արեւելեան ճաշակով նկարիչ Գ. Բաշինջաղեանը։

Վարչութիւնը խնդրում է հասարակութեան՝ ով կարող է շնորհ բերի երեկոյթին ԹԻՖԼԻՍԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՎ։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

Տեղերի գները 3 ր. մինչեւ 1 ր., աշակերտների համար 55 կոպ.։

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Թիֆլիսի Ժողովարանում և պ. Ե. Մատուրեանի խանութում։

Երեկոյթի կառավարչուհի՝ իշխ. Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

առ. (26,30,2,5) 229. 5—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդ. Ներկայացումներ կազմակերպող

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, մարտի 25 ին

✦ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԵՐԵԿՈՅԹ ✦

ՆՈՒԻՐՎԱԾ Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երեկոյեան ժամը 7½-ից բատրօնի Քօյէում կը կատարվի հոգեհանգիստ Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ յիշատակին մահվան տարեդարձի առիթով։

I
Ն. ԱՂԲԱԼԵԱՆԸ կը խօսէ
Գ. Սունդուկեանի մասին

II
Պ Է Պ Օ
կոմէդիայի Բ. գործողութիւն։

III
ՔԱՆԴԱԾ ՕԶԱԽ
կոմէդիայի Բ. գործողութիւն։

IV
ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՏԻՊԵՐԻՑ։

Հոգեհանգստի սկիզբը ժամը 7½-ին, ներկայացմանը՝ 8½-ին։

Հերթ. կարգադրիչներ՝ Երիցեան, Ստամբոլցեան և Փիրումեան

առ. 233. 2—1

ԲՈՒԼԻՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲԱԴԻՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՈԹՈՐԱԿՈՎ։

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։

Հիւանդներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։

Սօլոլակի, Բէհրութեան փող. № 23 (անկիւն Դանիվկոյսի)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 92. 100—36

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Այսօր, Թիֆլիսում, փոխարքայի օգնական սենատոր Վատացիի նախագահութեամբ բացվում է մի խորհրդակցութիւն, մասնակցութեամբ Պետերբուրգից եկած մի քանի պաշտօնեաների։

Խորհրդակցութեան նպատակն է պարզել մի քանի խնդիրներ, որոնք վերաբերում են մեր երկրի գիւղատնտեսական արդիւնաբերական զարգացմանը։

Առաջին խնդիրն այն է, թէ ինչ կազմակերպութիւն տալ գիւղատնտեսութեան զանազան ճիւղերում գործող մասնագէտներին։

Երկրորդ՝ ինչպէս կազմակերպել գիտական և գործնական փորձերը գիւղատնտեսութեան ասպարէզում։

Երրորդ՝ պարզել ցուցադրութեան ցանց կազմելու հարցը։

Չորրորդ՝ պատրաստել նիւթ նախահաշիւ կազմելու առաջիկայ տարիների համար։

Այդ խնդիրները շատ կարեւոր և էական են մեր երկրի տնտեսական զարգացման համար։

Արդարև՝ մեր երկրում սկսում են բազմանալ մասնագէտ-գիւղատնտեսները թէ իբրև պետական պաշտօնեաներ և թէ զանազան հիմնարկութիւնների կողմից նշանակված գործավարներ։

Թէեւ այդ բազմազան տեսակի գործողներին։

Գեղական ագրօնոմներ, որոնք գրանվում են Թիֆլիսում երկրագործութեան մինիստրի լիազօրի դիւանատանը։

Գեղական ագրօնոմներ, որոնք գրանվում են նահանգական քաղաքներում։

Զեմստվային ագրօնոմներ, որոնք իրանց հրահանգիչ ծառայակիցների հետ գանվում են նահանգներում։

Ագրօնոմներ, որոնք ծառայում են վաղաբուծական և գինեգործական կոմիտէներում, բամբակագործական կազմակերպութիւնների մէջ, շերամապահական կայարանում, գիւղատնտեսական ընկերութիւնների մէջ և այլն։

Ինչպէս տեսնում էք, մեծ է այն հիմնարկութիւնների թիւը, որոնք ունեն գիւղատնտեսական գործավարներ և պաշտօնեաներ։

Դրանք ներկայումս կապ չունեն միմեանց հետ, չեն յարմարեցրել իրանց պարապմունքները այնպէս, որ կարողանային միացած ոյժերով մի ընդհանուր ընդարձակ ծրագրի համար աշխատել։

Անշատ, միմեանցից կտրված, երբեմն մէկը միւսին խոչընդոտ հանդիսանալով, գիւղատնտեսական գործողները չեն կարողանում օգտաւէտ լինել երկրի համար այն չափով, ինչպէս նրանք կարող էին լինել, եթէ նրանք ստեղծած լինէին որոշ ներդաշնակութիւն իրանց գործելակերպի մէջ և հանդէս բերէին համակարգված ընդարձակ գործունէութեան մի ծրագիր սիստեմօրէն իրագործելու նրան կեանքի մէջ։

Այդ ներդաշնակութիւնը և համակարգութիւնը իրականացնելը — հերթական պահանջ է մեր օրերի համար։

Եւ ահա մենք տեսնում ենք հրաւիրված մի յատուկ խորհրդակցութիւն այդ պահանջի շուրջ դիրված խնդիրների քննութեան համար։

Անշուշտ՝ ներկայ խորհրդակցութիւնը կը լինի առաջին լուրջ քայլը մշակելու կազմակերպչական գործունէութեան նախնական ծրագիրը։

Իսկ ապագայում, երբ գործնական կեանքի փորձերը կամքարեն մեր երկրի իրականութիւնից մի շարք փաստեր և դիտողութիւններ, հնարաւոր կը լինի աւելի ևս զատարդագործել մշակվող ծրագիրը և ընդունակ լինել նպաստելու մեր երկրի գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացմանը աւելի ևս լիաբովանդակ ծրագրով ու գործելակերպով։

Ա. Քալանթար

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Մարտի 21-ի լոյս 22-ի գիշերը Նորին Գայծառափայլութիւնը քնեց ընդհատումներով մօտ 6 ժամ։ Մարմնի տաքութիւնը 37 աստիճան։ Զարկերակը 70 մի րոպէում։ Շնչառութիւնը 28-ից մինչև 32։

«Հ. Ե.»-ի թղթակցի ասելով, Զուլֆայում նորակառոյց ուղղափառ եկեղեցու օծման հանդիսի օրը քրիստոնեայ և մահմեդական ազգաբնակութեան ներկայութեամբ կատարվել է նաև մաղթանք Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի շուտափոյթ առողջութեան համար։

Մեզ գրում են Դուշէթից, որ այնտեղ ամսոյս 18-ին, կիրակի, պատարագից յետոյ ծխատէր Ե. ք. Դէմուրեանցը կատարել է ծնկաչոք մաղթանք փոխարքայի շուտափոյթ առողջութեան համար, ներկայութեամբ երկսեռ հասարակութեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
21 մարտի

Պետերբուրգ. — Թագաւոր Կայսրին բաղդ ունեցաւ ներկայանալու բոլգարական ազգային ժողովի նախագահ Դանէվը։

Լօնդոն.—Անգլիական թագաւորական զոյգը կը մեկնէ Բերլին կայսրի դստեր հարսանիքին ներկայ գանվելու համար։ Այցելութիւնը կրելու է միանգամայն մասնաւոր բնաւորութիւն։ Պաշտօնական այցեր գահ բարձրանալու առիթով չեն լինի Եւրոպայի այժմեան ահռելի դրութեան պատճառով։

Վիէննա.—Զանազան տեղերից ստացվող դիմումներին գոհացում տալու համար «Կօր. Բիւրօն» տեղեկացնում է, որ կայսրի առողջութիւնը միանգամայն բաւարար է։ Կայսրը երէկ անձամբ ընդունեց Ցիրօլի փոխարքայի երդումը։

Պարիզ.—Բալկանեան գործերի առիթով ֆինանսական մասնաժողովի զբաղմունքները կը սկսվեն ապրիլի երկրորդ կէսին։ Ռուս պատգամաւորներ լինելու են գեսպանատան խորհրդատու Սէվաստոպուլօ, ֆինանսական գործակալ Բաֆֆալովիչ, արտաքին գործերի մինիստրի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Սօլդատենկով, ռուս-ասիական բանկի Պարիզի բաժանմունքի տնօրէն Նիկոլայ Բաֆֆալովիչ։ Ռուսաստանը Ֆրանսիայի հետ միասին պաշտպանելու է դաշնակիցներին ֆինանսական վարձատրութիւն տալու անհրաժեշտութիւնը։ Այս տեսակէտին մասամբ կողմակից է և Անգլիան։

Մալտա.—«Դեֆէնս» յածանաւը մբտաւ ծովը՝ ըստ երևոյթին Կօրֆուի ափերը դիմելու նպատակով։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԵՐՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
21 մարտի

Վաշինգտոն. — Կառավարութիւնը վճռեց ճանաչել չինական հանրապետութիւնը։

Պէկին.—Կայացաւ կայսրուհու թաղումը։

Ուրգա.—Ի պատասխանի Իւանշիկայի վերջին նամակի, ժողովական կառավարութիւնը յայտնում է, որ համաձայն է չինական կառավարութեան այն կարծիքի հետ, թէ պէտք է խուսափել զինված ընդհարումից, սակայն նա յանուն դրա զոհ չի բերի իր անկախութիւնը, եթէ պրեզիդէնտը համաձայն է հաշտութեան բանակցութիւններ սկսելու, ապա ուրեմն երկու կառավարութիւնները միաժամանակ յետ են կանչելու իրանց զօրքերը, յետոյ չինական կառավարութիւնը պէտք է Ուրգա ուղարկէ բանակցելու համար՝ հաշտութեան կողմակից առանձին լիազօրի, որ իր հետ չէ բերելու զօրքեր։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
21 մարտի

Ռոգիա. Իկ... ...ՔՆ. ...նաեան Օդրէնից 600 վերաւորով։

Կ. Պոլիս.— Պաշտօնապէս հաղորդվում է, որ երէկ Զաթալջայի դիրքերի վրա հանգստութիւն էր տիրում։ Միայն ձախ թեւը թնդանօթներ պարպեց թշնամու դէմ, որ այդ ժամանակ բերդ էր կատուցանում։ Նաւատորմը նոյնպէս մասնակցեց թնդանօթաձգութեան։

Բելգրադ.—Թագաւորը Ֆերդինանդից հեռագիր ստացաւ, որի մէջ բուռն շնորհակալութիւն է յայտնված սերբ զօրքերի եղբայրական օգնութեան համար Ադրիանուպոլիսը վերցնելու ժամանակ։

Սկուպշչինան բացվեց։ Որոշվեց հեռագրով ցաւակցութիւն յայտնել յունաց պարլամենտին՝ Դէորգ թագաւորի սպանութեան առիթով։ Մինիստր-նախագահ Պաշիչը ոգևորված ճառով կառավարութեան և ժողովրդի անունից շնորհակալութիւն յայտնեց քաջարի զօրքին նրա փայլուն յաղթանակների համար և յայտնեց, որ կառավարութիւնը վճռել է Կոսսովայի դաշտում մահարձան մատուռ կառուցանել ի յիշատակ ժողովրդական յաղթութեան։ Սկուպշչինայի նիստերը կը տևեն մինչև մարտի 26-ը։

Զինուորական մինիստրութիւնը որոշեց արձակել այն բոլոր զինուորական գերիներին՝ առանց ազգի խտրութեան, որոնք ծնվել են դաշնակիցներից նուաճված երկիրներում։

Լօնդոն.—Բէյրութը տեղեկացաւ դիւանագիտական աղբիւրներից, որ դեսպանաժողովի խորհրդակցութիւնը յետաձգվեց ցոյցին վերաբերեալ որոշ հրահանգներ չը լինելու պատճառով։ Հեղինակաւոր աղբիւրից հաղորդում են, որ, բացի Իտալիայից, ցոյցին մասնակցելու է նաև Ֆրանսիան Ռուսաստանի համաձայնութեամբ։ Ի հարկէ տիրող անորոշութիւնը սոսկ մի քանի ժամվայ խնդիր է։

Բէյրութի տեղեկութիւնների համաձայն ոչ-պաշտօնական համաձայնութիւն է կայացել մեծ պետութիւններ, Բոլգարիայի և Թիւրքիայի միջև՝ Թիւրք բոլգարական սահմանի վերաբերմամբ։

Ուրգա.—Ի պատասխանի Իւանշիկայի վերջին նամակի, ժողովական կառավարութիւնը յայտնում է, որ համաձայն է չինական կառավարութեան այն կարծիքի հետ, թէ պէտք է խուսափել զինված ընդհարումից, սակայն նա յանուն դրա զոհ չի բերի իր անկախութիւնը, եթէ պրեզիդէնտը համաձայն է հաշտութեան բանակցութիւններ սկսելու, ապա ուրեմն երկու կառավարութիւնները միաժամանակ յետ են կանչելու իրանց զօրքերը, յետոյ չինական կառավարութիւնը պէտք է Ուրգա ուղարկէ բանակցելու համար՝ հաշտութեան կողմակից առանձին լիազօրի, որ իր հետ չէ բերելու զօրքեր։

Դեսպանաժողովը կը գումարվի մարտի 22-ի առաւօտը։

Ուրգա.—[illegible] մէջ ստատուսսեկրետար Եագօվը բացատրութիւններ տուեց բալկանեան պատերազմի հետ կապված մի քանի հարցերի վերաբերմամբ։ Եագօվի սկսելով սկզբում նախագծված էր կազմել բալկանեան բոլոր տէրութիւններից մի բալկանեան դաշնակցութիւն, որի մէջ մտնելու էր և Թիւրքիան, բայց Բ. Դրան խուսափողական պատասխանի պատճառով 1912 թ. ամառը կազմակերպվեց բալկանեան դաշնակցութիւնը առանց Թիւրքիայի մասնակցութեան և ընդդէմ նրա։ Պատերազմը սկսվեց միւս դաշնակիցների մատնութեան հակառակ՝ Զերնօգորիայի վաղաժամ հանդէս գալու պատճառով։ Ազգանական հարցում Գերմանիան լոյեալորէն կանգնած է իր դաշնակից Աւստրիայի կողմը։ Բոլգարումինական միջադէպում Գերմանիան ձգտում է օգնել Ռումինիային։ Հաշտութիւն կնքելուց յետոյ, ֆինանսական խնդիրները կը քննվեն Պարիզում մասնագէտների մասնակցութեամբ։ Միդիա—Էնոս սահմանագիծը առաջարկել է Ռուսաստանը և արդէն ընդունվել է Թիւրքիայից։ Բալկանեան պատերազմների պատասխանը դեռ յայտնի չէ։ Եգէյեան կղզիների հարցը բաւական դժուարութիւններ է ստեղծում։ Դարդանէլի խնդիրը դեռ ոչ ոք չէ յարուցել։

Եագօվի օգնական Ցիմերմանը, ջնջվելով բալկանեան գործերը, ասաց, որ Լօնդոնի դեսպանաժողովը նախնական համաձայնութեան է յանգել այն սկզբունքային կէտերի վերաբերութեամբ, որոնց հիման վրա բալկանեան պետութիւնները մասնակցելու են Թիւրքական պետական պարտքին։ հարցի մանրամասնութիւնները կը կանոնաւորվեն Պարիզի ֆինանսական վեհաժողովի մէջ։

Պաշտօնական շրջանների կարծիքով, Գ. Հ. Գ. մարտի 20-ի հաղորդած տեղեկութիւնով միանգամայն պարզ որոշված է Ծովային ցոյցի միջազգային բնաւորութիւնը։ Թօսք լինել չէ կարող Անտիվարիում զօրք իջեցնելու մասին, կամ թէ Ադրիատիկի նաւահանգիստները նուաճելու մասին։ Նկատի կայ միայն կարել մթերքների ներմուծումը Զերնօգորիա՝ ծովի կողմից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԱՆՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՀԱՑԱՍՏԱՆԸ

Անյոյս եւ անլոյս

Ջիւնի ծովով.—80 տան փոխարէն 20-ը.—«Բրիստոնեայ օներ».—Բէկի ցուցմունքը.—Սարսափը Ռուսաստանի առջեւ.—Ժամանակ է օգնելու։

Պատոս, 11 փետրվարի

...Մենք չենք գնում, այլ «լողում ենք» ձիւնի ծովով։ Լողում ենք, ինչպէս որ լողում են իսկական ծովում, ուր չը կան ոչ հեռաքերի տեղեր, ոչ ճանապարհորդներ, ոչ կամուրջներ, ոչ վերսաբի կամ հեռագրական սիւներ, այլ կայ միայն ուղղութիւն, որը ցոյց է տալիս կողմնացոյցը։ Իմ նաւը—ցածրիկ, նեղ կառք, բռվվանի, լծված մի զոյգ ուժեղ ու գիմացկուն ձիերի իր բազմօրեայ ճանապարհին (Բայազիդից դուրս գալուց 10 օր յետոյ)—ղեկավարվում է նոյնիսկ ոչ թէ կողմնացոյցով, այլ մի ինչ-որ ինձ համար բոլորովին անհասկանալի բնազդով։ Ուշադրութեամբ նայելով հարթ ու ողորկ ձիւնի ծածկոցին, նա, Մայն-Բիդի վէպերի մէջ պատկերացված հնդկացու նման կամ թէ ինչպէս Բիւրքանի Շերլօկ-Հոլմսը, որում է նրանում մի քանի օր առաջ այդտեղից անցած ուղտերի կարաւանների «հետքերը», որոնք անտեսանելի էին իմ աչքի համար, և ահա այդ հետքերով էլ մենք լողում ենք, օրեցօր թաղվելով ձիւնի ահագին հիւսերի մէջ,

ԴՎՎԺՎՍՈՎՍ ԴՎՖՂԴ

Ինչ մեղքս թաքցնեմ, ինչ ասեմ Տեր Աստված իմ, ինչ ասեմ ամենակալ Տիրոջ առաջ, ինչ ասեմ Սուրբ Հոգուդ առաջ, ինչ ասեմ Սուրբ Աստվածածնի առաջ, ինչ ասեմ Սուրբ Խաչի առաջ, ինչ ասեմ Սուրբ Գրիգորի առաջ, ինչ ասեմ Սուրբ Սարգիսի առաջ, ինչ ասեմ Սուրբ Հռիփսիմեի առաջ, ինչ ասեմ Սուրբ Գայանեի առաջ, ինչ ասեմ Սուրբ Ներսեսի առաջ, ինչ ասեմ Սուրբ Հակոբի առաջ, ինչ ասեմ Սուրբ Ղևոնդի առաջ, ինչ ասեմ Սուրբ Ներսես

ՀԱՅԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

✦ Փիֆիվի թերի թերի ստացվեցավ Ամսոյ ենչաշտան ամսոյ ամսոյ ամսոյ

Այսօր, ընկերութեան տարեդարձի նախօրեակին, պարտք ենք համարում մի համառօտ հայեացք ձգել նրա միամեայ գործունէութեան վրայ, ծանօթացնել հայ հասարակութիւնը նրա հետ։

Թողնելով մօտիկ ապագային իր լայն ծրագրի և ճոխ կանոնադրութեան մշակումը, ընկերութիւնը կազմել և հաստատել է մի փոքրիկ կանոնադրութիւն, որի առաջին վեց կէտերում ամփոփված են նրա ներկայ գործունէութեան ծրագիրը և մերձաւոր նպատակը։ բերենք այդ կէտերը թարգմանաբար։

1) Պետերբուրգի հայ գեղարուեստական ընկերութեան նպատակն է։ ա) Աջակցել զարգացնելու և տարածելու հայ հասարակութեան լայն խաւերում սէր և հետաքրքրութիւն դէպի գեղեցիկ արուեստը, այն է նկարչութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն, երաժշտութիւն (նուագաւոր և երգաւոր), բեմական արուեստ, հնախօսութիւն, գեղեցիկ գրականութիւն և այլն։ բ) Ծառայել միջավայրը իր անդամների և նրանց ընտանիքների համար՝ ստանալու գեղարուեստական և այլ բաւականութիւն ու զուարճութիւն։

2) Իր այդ նպատակների համաձայն՝ ընկերութիւնը կարող է իր անդամների և նրանց հիւրերի համար կազմակերպել՝ զբոսյցներ, դասախօսութիւններ ընդհանրապէս գեղարուեստի մասին, գեղարուեստական-երաժշտական երեկոյթներ, պատկերների, ոճաւոր գեղարուեստա-արդիւնաբերական գործերի ցուցահանդէսներ, համերգներ և պարահանդէսներ։

3) Ընկերութիւնն իրաւասու է ունենալու իր մատենադարանն ու թանգարանը։

4) Ընկերութիւնն աջակցում է ուսումնասիրել հին հայկական կուլտուրան հնախօսական գիտական տուեալների հիման վրա և նպաստում է ձեռք բերել գեղարուեստական նիւթեր իր գրադարանի և թանգարանի համար։

5) Ընկերութիւնը մրցանակ է նշանակում գեղարուեստական և երաժշտական երկերի համար։

6) Ընկերութիւնն հրատարակում է իր գեղարուեստա-երաժշտական հանդէսը և պատկերաւոր գրացուցակը։

Կանոնադրութեան Ցացած մասը վերաբերում է ընկերութեան կազմին և նրա ներքին կառավարութեան, որ ընդհանուր է նման մարմիններին։

Անցնելով ընկերութեան միամեայ գործունէութեան նկարագրին, կարող ենք ասել, որ այդ գործունէութիւնն ընթացել է մօտաւորապէս երեք ուղղութեամբ։ Նախ՝ ընկերութիւնն աշխատել է առաջ քաշել և հնարաւորութիւն տալ հայ երիտասարդ ոյժերին զարգացնելու իրանց ընդունակութիւններն ու կարողութիւնները ընդհանրապէս գեղարուեստի և մասնաւորապէս հայ գեղարուեստի ասպարէզում։ հայ հասարակութեան մէջ առաջ բերել հետաքրքրութիւն դէպի հայ արուեստը, տալ գաղափար ու ճաշակ այդ արուեստի մասին։ Երկրորդ՝ ծանօթացնել ռուս և այլ օտար հասարակութիւնները հայ արուեստին։ Եւ երրորդ՝ ուսումնասիրել և զարգացնել հայ արուեստն ու հնախօսութիւնը։

Համաձայն առաջին ուղղութեան, որով ընկերութիւնն հանդէս է գալիս որպէս դպրոց, տարվայ ընթացքում կազմակերպել է հինգ ընտանեկան երեկոյթներ, ուր սովորաբար ամեն մի շնորհալի անձի հնարաւորութիւն է տրվում արտայայտվել նոյն իսկ յանպատրաստից, հանդէս բերել իր հոգեկան կարողութիւնները. այդպէս՝ տեղի են ունեցել խմբական և մենական երգեր, նուագածութիւններ, զրոյցներ, դասախօսութիւններ, պարեր, մոգիկներից նկարումներ, մի թատերական ներկայացումն և այլն։ Մի հասարակական-գրական-երաժշտական երեկոյթ էլ նուիրված է եղել մեր յարգելի քանասաեղծ Ե. Չովհաննիսեանի 30-ամեայ գրական-գործունէութեան, ուր ռուս և հայ լեզուով խօսել, կարդացել են Ե. Չովհաննիսեանի բանաստեղծութեան բնոյթի և լեզուի մասին խառն կենսագրական տեղեկութիւններով, արտասանել, երգել և նուագել են նրա բանաստեղծութիւններից։

Երկրորդ ուղղութեամբ նա մասնակցել է զեկեմբերը ամսում տեղի ունեցած ազգագրական երեկոյթին, որը կազմակերպել էր «Вѣстникъ Знанія»-ի խմբագրութիւնը. այդտեղ նա իր հայկական քեօսկն ունէր և նուագաւոր ու երգեցիկ խմբերը։

Երրորդ ուղղութեան համապատասխան ընկերութիւնը ձեռք է բերել ասիական եւրաժշտական գործիքներ, որով կապել է իր նուագածու խումբը մեծ մասամբ ուսանողներից երաժշտագէտ Կազաչենկոյի ընդհանուր ղեկավարութեամբ։ Վերջինս ձեռնարկում է կատարելագործել այդ գործիքները յարմարեցնելով քառաձայն նուագածութեան պահանջներին։ Ընկերութիւնը մտադիր է հրատարակել Եկմալեանի երաժշտական երկերը, և այդ ուղղութեամբ կատարվել են արդէն նախնական քայլերը։

Նոյն ուղղութեամբ և ոգով ընկերութիւնն այսուհետև ձեռնարկելու է գեղարուեստական երկերի, գործերի, գործիքների, իրերի և այլն հաւաքման, ուսումնասիրութեան, կատարելագործութեան և հրատարակման. հասկանալի է, որ պատասխանատու աշխատանքները կը կատարվեն, ի հարկէ, հեղինակաւոր, ձեռներէց մարմինների միջոցով։

Այս համառօտ նկարագրից էլ արդէն երևում է, որ ընկերութիւնը շատ բան չէ արել, բայց համոզված է, որ սկիզբն է դրված մի գեղեցիկ գործի։ Հիմնադիր անդամները շատ լաւ գիտակցում են, որ իրանց անհատական ուժերից վեր է հասարակական մի այդպիսի վեհ ու ընդարձակ գործունէութիւն։ Նրանք հանդէս են եկել հասարակական աջակցութեան վրա յոյս ունենալով, երբէք յուսակտութիւն չունեն անձնական-անհատական ուժերի վերագրելու գործի տեղական կեանքն ու աջողութիւնը։ Հասարակական գոռ ոյժն է, որ սարեր է բարձրացնում, սարեր խորտակում։ Բայց պէտք է խոստովանել, որ հասարակութեան աջակցութիւնը շատ թոյլ է հանդէս եկել, գոնէ այս առաջին տարվայ ընթացքում, եթէ չը հաշուենք որոշ անձերի յոռետես և նոյնիսկ չկամեցող, նախանձոտ վերաբերմունքը։ Այնու ամենայնիւ մենք հաւատում ենք, որ եթէ գործը հասարակական է ու վսեմ, հասարակութիւնն իր մեծամասնութեամբ վաղ թէ ուշ հանդէս կը գայ և ձէր կը դառնայ իր գործին, զարկ և փայլ կը տայ նրան։ Հաւատում ենք հասարակական բաղմաձայ ոյժին և այդ ջերմ հաւատով ապրում։

Ծանօթ.—Ընկերութեան անդամ կարող է գրվել ամեն ոք. տարեկան անդամավճարն է վեց ռուբլի. ընդունված է և պատաւոր անդամակցութիւն։ Շնորհակալութեամբ կընդունվեն ընկերութեան վերոյիշեալ նպատակներին ծառայող իրեղէններ, նիւթեր և առհասարակ ամենայն նուիրաբերութիւններ հետևեալ հասցէով. С.-Петербургъ, Невскій проспектъ, домъ 54—3, кв. 61. Армянское Общество Изящныхъ Искусствъ.

Խնդրվում է հայ թերթերին արտատպել այս գրութիւնը։

Փոխ-նախագահ վարչութեան՝
Դ. Օքրոյեան
Քարտուղար վարչութեան՝
Իգ. Իփէքճեան

Պետերբուրգ

ՄԱՄՈՒԼ

Երէկ մենք առաջ բերինք ռուսական մամուլի մի քանի օրգանների կարծիքը օրվայ հրատապ հարցի՝ զինուորական-բժշկական ակադեմիայի փակման մասին։

Կարծիքներ յայտնել են նաև եւրոպացի և ռուս գիտնականներ, պրոֆեսորներ։ Այսօր առաջ կը բերենք յայտնի ռուս գիտնական Մեչնիկովի և մի քանի այլ գիտնականների կարծիքը, որ տպագրված է «Рус. Сл.» թերթի մէջ։

Ձեր հաղորդած լուրը,—ասել է յարգելի գիտնականը,—ինձ խորապէս վրդովացնում է։ Ես սիրում եմ գիտութիւնը հոգուս ամբողջ զօրութեամբ, նրա ազատութիւնը դնում եմ ամեն բանից բարձր աշխարհիս մէջ։ Անձնապէս ես՝ ոչ ուսանող, ոչ պրոֆեսոր եղած ժամանակ համազգեստ չեմ կրել և բնաւ չեմ ափսոսում։ Նորերս ինձ հարցրին մասնաւոր կերպով Ռուսաստանից, թէ արդեօք կընդունեմ ես փոքձնական բժշկական ինստիտուտի վերատեսչի պաշտօնը, որ թափուր է մնացել։ Թէև ես վաղուց որոշել եմ Պաստէօրեան Ինստիտուտից տեղափոխվել ուղղակի գերիզմանատուն, թէև ես չեմ ձգտում պաշտօնների, պատիւների, բայց ինձ կարող էր գրաւել հայրենիքումս մեռնելու իղձը։ Սակայն գիտութեան մարդը յաղթեց քաղաքացու զգայականութեան, որովհետև վերջին ժամանակները գիտութիւնը ստորացված է Ռուսաստանում անասելի կերպով։ էլ դրանից հետուն գնալ անկարելի է։ Առաջ գիտութիւնը զգեստաւորեցին չինովնիկական մունդիրով, իսկ այժմ էլ հարկաւոր է դարձել զինուորի հագուստը։ Ես երկու շաբաթ անդամ չէի դիմանայ այդպիսի ծաղրանքի գիտութեան դէմ։ Կը փախչէի, հաւատացէք։ Սա աղաղակ է գիտութեան մի մարդու սրտի, մարդու՝ որ ապրում է միայն նրա համար։ Կապարային կաղմը, որ մտցվում է զինուորական-բժշկական ակադեմիայի մէջ, կը հասցնէ անդարմանելի կորուստ ռուսական գիտութեան, որ համաշխարհային պատուաւոր տեղ է գրաւում։ Խեղաթիւրում են անխնայօրէն երիտասարդութեան մի ամբողջ սերունդ, յետ են մղում նրան գիտութիւնից։ Բոլոր ազատ երկիրներում գիտութեանը տալիս են լիակատար ազատութիւն, անկախ՝ բոպէի քաղաքական դրութիւնից։ Գերմանիայում, օրինակ, այդ ազատութիւնը պահպանվում էր ամենատուժեղ ըէակցիայի ըստէներում։ Դուք երևակայեցէք ձեզ Բօտկինին, Պիրագովին, Կարավաէվին այդպիսի կացութեան մէջ, որպիսին կամենում են ստեղծել բժշկական ակադեմիայում։

Բերլինի բժշկական ակադեմիայի ըէկտոր պրոֆեսոր Կայզը ասել է հետևեալը։

Մեր ակադեմիայի ղեկավարները՝ գիտնականներ են։ Նրան օտար է կազմարմների հպատակութեան ոգին։ Ուսանողները դասընթացքները անցնելու ժամանակ բոլորովին անկախ են, հագնում են սովորական զգեստ, զինուորականներին ողջոյն չեն տալիս։ Մեր կարգապահութիւնը կայանում է համաչափ աշխատանքի մէջ։ Ցիշեցէք, որ մեր պատերից են դուրս եկել Վիրխովը, Հելմհոլցը։ Վտանգաւոր է գիտութեան վրա կազարմային փորձեր կատարել։

Ցայտնի գերմանացի գիտնական Լանդաուն ասել է։

Մինթէ ձեր կառավարութիւնը մտադիր է ոչնչացնել գիտութիւնը, ստեղծել թերուս բժիշկների տիպ, վերածել ուսանողներին զինուորների և ակադեմիան՝ զօրանոցի։ Այդպիսի սիստեմը կոչնչացնի գիտութիւնը, կիջեցնի ուսումը դիլետանտիզմի աստիճանին, որ անթոյլատրելի է բժշկականութեան մէջ։ Ռուս հասարակութեան և մամուլի պարտքն է բողոքել այդպիսի մահափորձերի դէմ։

Հռչակաւոր ֆրանսիացի վիրաբոյժ Դուաբէն հետևեալն է ասել։

Ես հերքում եմ գիտութեան մանդարինականութիւնը, հետևաբար չեմ կարող ծափահարել գիտութեան կազարմանների ծնունդը։

Ռուսական գիտութիւնը առաջ է բերել համաշխարհային պարագլուխներ, ինչպէս օրինակ ձեր Մէչնիկովը, չը խօսելով այլ փառաւոր պլեադի մասին։ Կազարմանները գիտութեան մէջ ոչ մի հետևանք չեն արտադրի։ Օրինակները շատ մօտ են։ Վերցրէք մեր գիտութեան ստոր վիճակը Նապոլէոնեան դարաշրջանի ամենածաղկեալ դրութեան ժամանակ, երբ կառավարութիւնը ձգտում էր խնամակալ լինել նրա վրա։

Վիէննայի հռչակաւոր վիրաբոյժ պրոֆեսոր Էյզելսբերգը ասել է։

Զինուորական մարզութիւնը, օֆիցէրներին ողջոյն տալը բոլորովին աւելորդ բաներ են։ Նոյն իսկ զինուորական բժիշկները պէտք է պատրաստվեն և կրթվեն հասարակական լաբորատոր աւանդութիւնների մթնոլորտում, որոնք չը ճնշեն անձնաւորութիւնը և չը խափանեն նախաձեռնութեան ազատութիւնը, որ առանձնապէս կարևոր է զինուորական բըժիշկների համար։

Մինչ մամուլը, գիտնականները այս պիսի բողոքներ են յայտնում, ռուսաց Պետական Դուման, որը առաջինը պէտք է իր ձայնը բարձրացնէր, ընդհակառակը, մերժում է այդ առթիվ եղած հարցաքննդումի շտապողականութիւնը։

ՕՐՎԱՑ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սկիւտարի անկումը սպասվում է ժամ առ ժամ։

◆ Լուրերի համաձայն, մեծ պետութիւնները մտադիր են չէզոքացնել Ցացած թիւրքական երկիրը։

◆ Զերնօգօրական Նիկոլայ թագաւորը հրաժարվում է գահից յօգուտ իր որդի Դանիլի։

◆ Ադրիանուպօլսից հեռագրում են, որ քաղաքում տիրում է լիակատար անիշխանութիւն։ Տները հրդեհվում և կողոպտվում են։ Փողոցներում սպանում են տեղական ընակիչներին։ Աղգաբնակութիւնը սարսափահար՝ փողոց դուրս չէ գալիս։

◆ Յոյները մեծ թիւով զօրքեր են կենտրոնացնում Սալոնիկի մօտ, որպէս զի այդ քաղաքը իրանց ձեռքում պահեն նոյն իսկ այն դէպքում, եթէ բոլգարների կողմից պահանջ լինի։

◆ Պարիզի դեսպան Իզվոլսկիին Լոնդոն տեղափոխելու լուրերը հերքվում են։

◆ Լուրերի համաձայն, ռուսաց արտաքին գործերի մինիստրի պաշտօնը դարձեալ առաջարկվում է Իզվոլսկիին։

◆ Պետերբուրգում խօսում են՝ իբր բոլգարական գեներալ Բադկո Դիմիտրիէվի միսիան չաջողվեց։

◆ Պետական խորհրդի անդամների ասելով, շուտով Դօրնօվոյին տրվելու է բարձր պատասխանատու պաշտօն։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականը կը լինի յունիսի վերջերին։ Նրա տեղ նշանակվելու է Պետերբուրգի ուսումն. շրջանի հոգաբարձու Պրուդչէնկօն, իսկ վերջինիս պաշտօնը ստանձնելու է Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Բուդոլֆը։

◆ Բաթումի բանտարկեալները խընդրել են Պետական Դումայի անդամ Զիսէնկէլիին հարցապնդում ներկայացնել Բաթումի բանտում տիրող կարգերի մասին։

◆ Փակված զինուորա-բժշկական ճեմարանի արձակված ուսանողներից աւելի քան 500 հոգի մտնում են Խարկովի և Իւրիեվի համալսարանները։ Ճեմարանի պրոֆեսորներից շատերը դէմ լինելով զինուորական մինիստրի ձեռք առած միջոցներին՝ ներկայացրել են հրաժարականի խնդրագիր։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

19 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեց լեհական «Դզիէնիկ Պետերբուրգսկի» լրագրի այսօրվայ համարը։

ՄՈՍԿՎԱ։ Գրաւվեց «Раннее Утро»-ի № 87. խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում 1034-րդ յօդուածով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հօֆմէյստեր սենատոր կոմս Մեդէմը նշանակվեց Պետական Խորհրդի անդամ։

Օդեսայի ուսումն. շրջանի հոգաբարձու Շէյբրակովը նշանակվեց Ռիգայի շրջանի հոգաբարձու։

«Гол. Моск.» լրագրում երէկ տպված էր, թէ իբր մինիստրների խորհրդի նախագահը մինիստրների խորհրդում հարց է յարուցել իրաւունք տալու կոմս Վիտտէին բանակցելու առևտրական պայմանագրի մասին Գերմանիայի հետ այն պայմանով, որ պէտքի առևտրի մինիստրը նիւթեր ժողովէ միայն այդ գործի համար։ Տեղեկատու բիւրօն կտրուկ կերպով հերքում է «Г. М.»-ի լրչեալ տեղեկութիւնը։

ԼՎՈՎ։ Բոլոր լեհ եպիսկոպոսները խօսեցին ընտրողական օրինագծի դէմ և վճռեցին խուսափել նրա քուէարկութիւնից սէյմում։ Այդ օրինագծի աջողութեան շանսերը կասկածելի են։

ՀՌՈՄ։ Փակվեց աշխարհագրագէտների միջազգային կոնգրէսը։ Հետևեալը կայանալու է Պետերբուրգում։

ՉԸ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

21 մարտի

Էջմիածնից—Շահխաթունուն, Ելախից—Զօրանտին, Բազուից—Մ իրզայ ոնցին, Եկատերինոսլաւից—Հէյուրովսքին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը

22 մարտի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.		453	ր. — կ.
II » » »		353	ր. — կ.
III Ադնւակ. բանկ. »		332	ր. — կ.
4% Պետական ռենտա		93	ր. 87½ կ.
5% Արտաք. փոխառ.	1906 թ.	103	ր. 12½ կ.
5% Ներքին »	1905 »		
	I հրատ.	104	ր. 87½ կ.
5% » »	II հրատ.	104	ր. 87½ կ.
5% Պետ. Ադնւ. բանկ. գր.		101	ր. — կ.
4½ » » » »		90	ր. 75 կ.
4% » » » »		89	ր. 50 կ.
3½% » » » »		84	ր. — կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.		101	ր. — կ.
4½% » » » »		91	ր. — կ.
4% » » » »		90	ր. 87½ կ.
5% Արտաք. փոխառ.	1908 թ.	105	ր. — կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդոն 10 ֆ. ստեր.	94	ր. 97½ կ.
Բերլին 100 մարկ	46	ր. 38 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37	ր. 60 կ.
Թաւրիզ 10 դրան	1	ր. 73 կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8	ր. 65 կ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կապուրիւն եւ ստամոքսի կատարը

Զրի դեղատոմս, որ ինձ բժշկեց 4 շաբաթում։

Ես կամենում եմ հաղորդել այդ դեղատոմսը, որը ինձ փրկեց. թոց օգտվին նրանից և այլ տառապալները.—Խնդրէք մօտակայ դեղատնից կամ դեղապահեստից «Դ-ք Մէյէրի Սուսմսխպէլնից» մի փոքր տրկդիկ։ Նա էժան է և ձեզ միանգամայն թեթևութիւն կը պատճառէ։ Թժիշկը ինձ մօտ երեսուն էր հանել ստամոքսի կատարը և ալիքների ատօնիա։ 2ուրս շաբաթվայ ընթացքում ես աղատվեցի իմ տանջանքներից և մինչև անգամ մայսիս ինձ այլևս չէ անհանգստացնում։ Ես բուռն կերպով առաջարկում եմ այդ դեղը նրա համար, որովհետև նա միանգամայն անվնաս է։

(П. 49320)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 12 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բաքու 11 ժ. 8 ր. գիշ.։ Պօստասար գնացքը № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցերեկ., Բաքու 5 ժ. 36 ր. ցերեկ.։ Մարդասար գնացքը № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բաքու 7 ժ. 53 ր. առ.։ Խառն գնացքը № 106 (Մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցերեկ., Եւլախ 5 ժ. 45 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բաքու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱՔՈՒՑ.—Մարդասար գնացքը № 11—10 ժ. 3 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ Պօստասար գնացքը № 2—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 55 ր. ցերեկ., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլօվո 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.։ Խառն գնացքը № 107 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստասար գնացքը № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպոլ 12 ժ. 7 ր. ցերեկ., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցերեկ., Ալուխանլու 5 ժ. 49 ր. ցերեկ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ Մարդ.-ապրանքասար գնացքը № 8/79 (միայն II և III կարգի վագոնների)—1 ժ. 6 ր. ցերեկ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպոլ 12 ժ. գիշ., Էջմիածին 6 ժ. 29 ր. գիշ., Ալուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 5 ժ. 51 ր. առաւ.։ Մարդասար-ապրանքասար գնացքը № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՈՐԺՈՄ.—Մարդասար գնացքը № 95/10—3 ժ. 17 ր. ցերեկ., հասնում է Դօրի 5 ժ. 57 ր. ցերեկ., Բօրժոմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 10 ր. եր. Պօստասար գնացքը № 3—9 ժ. առ.։ Մարդասար գնացքը № 5—3 ժ. 46 ր. ցերեկ.։ Խառն գնացքը № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱՔՈՒՑԻՑ.—Արագ գնացքը № 12—8 ժ. 50 ր. առ., Պօստասար գնացքը № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 6—5 ժ. 15 ր. ցերեկ.։ Խառն գնացքը № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆՑԻ.—Պօստասար գնացքը № 40/3—8 ժ. առ.։ Մարդ.-ապրանքասար գնացքը № 6Ք./5—1 ժ. 28 ր. ցերեկ.։ Մարդ.-ապրանքասար գնացքը № 8Ց/7—5 ժ. 28 ր. ցերեկ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—Մարդասար գնացքը № 9/10Ե—11 ժ. 22 ր. առ.։

ՀՕՆՕՐԵԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԵՄ

ՆՈՐ-ՄԻԶՈՑ

„SALO—ՊԻԶԻԼԻՆ“

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիներում, հնար՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ բնոյթ։

ՊԱՀԵՍՏՔ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։

(г.) 0—11

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ!

Վաճառվում են

Ե. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

1) Ինչպէս մօտակի բամբակը, ցկարներով. . . 15 կ.

2) Դարձեալ ձեռնարկ օրամապահութեան, ցկ. . 20 կ.

Դիմել գրավաճառներին։

Պահեստ՝ Елисаветполь! книжная торг. Ст. Жамгарянца.

(г.) 217. 5—2

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ծխական հոգաբարձու

Թիւնը խնդրում է այն անձանց, որոնք կը կամենային առաջիկայ 1913—14 ուսումն. թ-ից ստանձնել հոգաբարձութեան խնամքին յանձնված դպրոցի

ՏԵՍՉԻ ՊԱՇՏՕՆԸ,

որ բաց է մնացել Աւ. Արասխահանի մամվամբ, այժմեանից մտնել բանակցութեան մէջ հոգաբարձութեան հետ։ Դպրոցը երկսեռ է, ունի 500 աշ.-աշակերտուհի. դասընթացը հինգամեայ, ատեստանաւոր պէտք է դառնայ ութամեայ։

Թիկնոցուն լինելու է բարձրագոյն կրթութեամբ, բայց նշանակութիւն կը տրվի նաև փորձառութեանն ու անցեալ գործունէութեանը։ Տեսչի ընտրութիւնը պէտք է վերջացած լինի մայիսին։

Դիմել հոգաբարձութեան։

(ա.ա.) 224. 3—4

ՆՈՐՈՒԹ!

ԴՈՒԽԻ **ԻՄ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ** ԴՈՒԽԻ

(MON DESIR)

Т-во С. И. ЧЕПЕЛЕВЕЦКІЙ съ С-ми. Москва.

(М. 98517) 9—2

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՀԷՔԻԱԹ ՊԱՏՄԵԼ

Գործնական ձեռնարկ ստորին դասարանների կրօնի, հայոց լեզուի ուսուցիչների և ծնողների համար (ուրն ժողովրդական հէքիաթ)։ Գինն է 25 կոպ.։

Մշակեց ԱՐՇԱԿ ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ

Դիմել «Գիր» և «Գուտենբերգ» գրախանութներին։ Գումարով գնողներին կը լինի զեղչ։

Կազմողի հասցէն՝ Эривань, Армянская Духовная Семинарія.

(о. м.) 231. 6—1

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

յայտարարում է իր գիտութիւն պարոնայք ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «Մէդիի» (նաւապետ Բուլլ) մեկնում է Բաթումից Մարսէլ հանդիպելով Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս՝

հինգշաբթի, մարտի 28-ին (ապրիլի 10-ին 1913 թ. Ն. տ.)

Տեղեկութիւնների համար պիտի դիմել Թիֆլիսի գործակալ պ. Ս. Կիւլպէնկեանին, իր գրասենեակում, որ գտնվում է Արմիանսկի բազարում, Գօսթինի դէմ Մանթաշեանների։

232. Տելեֆոն № 7—21. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный